ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի դեկտեմբերի 15-ից 17-ը ՈՒզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ) գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Կարեն Գիլոյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ՈՒզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ), 2021 թվականի դեկտեմբերի 15-ից 17-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՈՒզբեկստանի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ և միջազգային ֆեդերացիայի գործադիր մարմնի անդամ Շ. Մախմուդով

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծանրամարտի աշխարհի առաջնությանը ներկա գտնվելու նպատակով:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպումների ընթացքում քննարկվել են սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության միջև համագործակցության հեռանկարները և համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:Ստորագրվել է սպորտի ոլորտում երկու երկրների համագործակցության հուշագիր:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպել եմ Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Ջալուդ Մոհամեդիի և Եվրոպական ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Միլան Միլոշևիչի հետ:Քննարկել ենք Հայաստանում 2023 կամ 2024 թվականին խոշոր մրցաշար անցկացնելու հնարավորությունները, ինչպես նաև ծանրամարտին վերաբերող ընդհանուր հարցեր:
Պայմանավորվածության համաձայն՝ կանցկացվեն համատեղ հավաքներ, սեմինարներ՝ խթանելով միջոլորտային փորձի փոխանակումը:

8.ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ներկայացուցիչներից 81 կգ քաշային Ռաֆիկ Հարությունյանը զբաղեցրել է 8-րդ տեղը, 89 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը նվաճել է ոսկե փոքր մեդալ, 96 կգ քաշային Դավիթ Հովհաննիսյանը B ենթախմբում զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը, նույն քաշային կարգի A ենթախմբում Հակոբ Մկրտչյանը գրավել է 12-րդ տեղը, 102 կգ քաշային Սամվել Գասպարյանը բրոնզե փոքր մեդալ է նվաճել պոկում վարժությունում, իսկ կանանց պայքարում Հայաստանի ներկայացուցիչ Տաթև Հակոբյանը զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը:Սիմոն Մարտիրոսյանը (109 կգ) նվաճել է Հայաստանի առաջին մեդալը. երկամարտի 416 կգ արդյունքով (188+228) նա երրորդ հորիզոնականն է զբաղեցրել՝ դառնալով ԱԱ բրոնզե մեդալակիր:Վարազդատ Լալայանը դարձել է փոխչեմպիոն +109 կգ քաշայինների պայքարում՝ երկամարտում գրանցելով 457 կգ արդյունք, իսկ Գոռ Մինասյանը նույն քաշային կարգում նվաճել է բրոնզե մեդալ՝ 448 կգ արդյունքով:

9.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

20.12.2021թ.